

29/90

ՃԱՐ ԲԵՐՅԱՅԵՐ

Աղիքը իմաստութեան
Երկիւղ Տեսուն :

(Հ-1)

Բ. Ապագան. Թիոն

ԿԱՍՏԱՆԴՐԱՊՈԼԻՍ

Ի Տպարանի Յ. Մէհմետիսկան

- Ա. Մ. Դ. -





17

4813-ԱՀ

1529-ԱԿ

6-33

ՃՐՈ
ԲԵՐՈՅԱԿԱՆ

— • —

Ի ՊԵՏՐՈՎԻՉԻ ԹԵՂԱ
ԿՈՍՏԱԴԻՆՈՒՊՈԼՍՈՅ
ՏԵՂԱՆ ՄԱՏԹԵՈՍ ԱԶԳԱՆԻ
ԱՐՔԵԳԻ ԱԿԱՊՈՍԻ

2004



Ի ԿՈՍՏԱԴԻՆՈՒՊՈԼՍԻ
Ի ՏՊԱՐԱՆԻ Յ. ՄԻԿԵԼԵՏԻ ԹԵՂԱ

= 1848 =

ՀԱՅՈՒԹՅԱՆ

“Վկիզեն իմաստութեան
երկիւղ Տեառն” :

(Աշակերտ):

3732 կ-67


— 2481 —

Ե. Օ. Դ

Այս տետրակիս առա-
ջին տպագրութիւնը քիչ
օրուան մեջ հասնելով
երկրորդ անգամ տպել
հարկ եղաւ : Դարրատան
տղոց սլարդ ընթերցման
վարժութիւնը ըլլալու նպաւ
տակով շինուած էր՝ իր
նպատակին չհասած հա-
տաւ : Բայց հասարակու-
թեան ձեռքը ասրած-
ուիլը՝ մեկ կողմեն աղեկ

= Դ =

Եղաւ, ծուռ հասկըց,
ուած կամ մութ մնա-
ցած քանի մը տեղեր կան
եղեր, անոնք խմացանք և
այս տպագրութես մէջ
զրուցուածքը բանալով,
ծանօթութիւն տալով,
բացատրեցինք. և վերջեն
մէկ յաւելուած մը ը-
րինք :



Ճ Ա Ր
Ք Ա Ր Ա Յ Ա Կ Ա,

Ե ւ ա յ ի ն ո ւ ն ե ա ն հ ա ր ի ս ս ո ւ ն ե ն ը ,
օ գ ո ւ թ ա ն ե լ ը և ծ ա գ ո ւ ժ ը :

Ճ Շ Մ Ա Ր Ի Տ ք ր ի ս ս ո ն ե ու
թ ե ն է կ ա տ ա ր ե ա լ ա ռ ա ք ի ն ո ւ թ ի
կ ը ծ ա գ ի . և մ է կ ա ղ գ ի ն կ ա ր ո -
զ ո ւ թ ի ւ ն ը զ օ ր ո ւ թ ի ւ ն ը և հ ա -
ր լ ս ս ո ւ թ ի ւ ն ը , ա ռ ա ք ի ն ո ւ թ ի ւ
ն ո վ կ ' ը լ լ ա յ : Ո է կ ա ղ գ ի ն ա ռ ա -
ք ի ն ո ւ թ ի ւ ն ն ա լ , ա մ է ն մ է կ օ ւ ն
ա ռ ա ք ի ն ի ը լ լ ա լ ո վ ն է :

Ա ռ ա ք ի ն ո ւ թ ի ը ա մ է ն ո ւ ն ա ղ է -
կ ո ւ թ ի ւ ն ը ն ե լ ո ւ զ ե լ է : Ա զ է -
կ ո ւ թ ի ւ ն ը , ը ն դ հ ա ն ո ւ ր ի ը լ լ ա լ ո վ

առաքինութիւն կ'ըլլայ . մասնաւոր մէկու մը աղեկութիւն ընելով , շատ մը մարդոց գեշութի հասցընելը՝ անիրաւութիւն է : Կընայ ըլլալ , որ մէկ աղդի աղեկութեան համար ըրած բանը , ակամայ քիչ մը մարդոց գովչի . հարկին անհրաժեշտ կերպով պահանջած ատենը անոնց օդուտին դովելով , գեշութիւն ըրած չես ըլլար : Առաքինութիւնը միշտ ընդհանուրի կընայի . քիչ մը մարդոց օդուտին համար , աղդ մը չի կործաներ :

Դարի դիտաւորութիւնով , անգիտութեամբ մեծ իմաս մը հասցուցիր , ըրածդ գեշէ , բայց դուն չարեացապարտ չես համարիր : Կամ գեշ դիտաւորութիւնով , աղեկ բան մը ըրած դանուեցար , ամենեւին առա-

քինութիւն ըրած չես ըլլար :
Ասկէց անհրաժեշտ պարտակա-
նութիւններ կը ծագի , որ ամե-
նեւին անխորհրդաբար բան մը
չընես , կամաւ կամ ակամայ ու-
րիշի գէշութե պառձառ չըլլաս :
Վզէկութիւն ընելու կը ջանաս ,
բայց ձեռքէդ չի դար՝ կամ միջոց
չունիս , առաքինի ես . աղէկու-
թիւն ընելու համար ունեցած
ջանքդ հերիք է : Բայց ձեռքէդ
կուգայ , կարելի է որ ինձի վեաս
մը կը դպչի ըսելով ետ կը փախ-
չիս , աղէկ մարդ չես : Վէկու մը
աղէկութիւն ընելու համար՝ շատ
մը մարդոց տունը վղցուցիր , ա-
նիրաւ ես : Հասարակաց օգուտա-
մը չընելով մասնաւոր մէկու մը
վեաս մը հասուցիր , անօրէն ես :
Կողմասիրութիւն ընելով ,
աղդային գործի մը վրայ տգէտ

մարդ մը դրիք . այն մարդուն ա-
ղէկութիւն լրած կ'ըլլաս . բայց
ազգին կործաննանը պատճառ ե-
ղար , խապար չունիս :

Վարդս պարտական է առաջ
հօրը , մօրը , եղբարցը և իր ադ-
դին , յետոյ ուրիշներուն : Իր
ազգը կարօտութեան մեջ ձգող
և ուրիշ ազգերու օգնութիւն
ընողներուն ինչը ըսեմ , հայրը կը
մուրացընէ՝ ինքը ուրիշներուն ո-
զորմութիւն կուտայ : Պու ազ-
գըդ քեզի համար , ուտելիքէն
խմելիքէն զրկըլելով , եկեղեցի-
ներ շիներ . քրիստոնէական սր
հաւատքը սորվեցուցեր է : Ա ը-
րայէն գլուխէն կտրեր , ցուրտէն
փառնալով քեզի դպրոցներ շիներ
է : Կալերախտ , ազգդ իր խեղ-
ձութիւնովք քեզ հսկացեր է ,
դուն ինչո՞ւ ան չես հսկար : Իր

Հօրը պէտք եղած հոգը չի տանելով, ուրիշին աղեկութիւն ընելը, առաքինութիւն չէ, մեկ կողմէն փառասիրութիւն է. մեկ կողմէն ալ ապերախտութիւն է. և անանկ ապերախտութիւն մը, որով ձեռք ձգելու յուսացած փառքը անարգութեան կը փոխուի: «Պատուեա զհայր քո և զմայր ո խօսքը անանկ աստուածային պատուեր մըն է, որ որ Կրոց մէջ գրուած ըլլալէն առաջ մարդոց սրտին մէջ գրուած է. և աստուածաշատութեան համար անգամ հայրն ու մայրը անարգելը՝ Վրիստոս տէրն մէր յայտնի խօսքով պախարակեց. ասանկ ընող փարիսեցիներուն կեզծաւոր ըսելով: Եւ յայտնի է որ՝ մեկ մարդ մը իր ծնողացը ինչ պարոք ունի նէ՝ իր ազգին ալ

նոյն պարտքը ունի . բայց մաս-
նաւոր մարդու մը չի վայլեր որ
իր ազգը խնամելու համար ծը-
նողը անխնամ թողու . նմանա-
պէս չի վայլեր որ ուրիշի աղե-
կութիւն ընելու համար իր ազ-
գը անխնամ ձգէ :

Կիբբերը չարթնցած՝ առաքի-
նութիւնը տղոց սիրտին մէջ տր-
պաւորելը դիւրին է . տղայք ձե-
զի կ'ըսեմ, ձեր պարտքը, անա-
րատ մնալ, գիտութիւն ստանա-
լով կիբբերնիդ զսպել, և օր մը
ձեր առաքինութիւնովը աղեր-
նուս պիտանի ըլլալն է :

Վզէկ բարք ունենալէն ետքը,
առ աքինութե՛ մէկ մասն ալ աշ-
խատութիւնն է : Ամէն մարդ
մէյմէկ արհեստի, կամ գիտու-
թեան, կամ գործքի տէր ըլլա-
լով, իր ազգին պիտանի ըլլալու է :

Ո՞ւ կ ազգ մը՝ զեղխութիւնը
ասելով, սկարդ և խոնարհ բարք
մը չունենայ նէ, իր բոլոր գի-
տութիւնը և արհեստին պառ-
զը ոչինչ կ'ըլլայ :

Առաքինութեան մեծ թշնա-
մին զեղխութիւնն է : Այս պէտք
է, նա պէտք է ըսելով, պէտք չե-
ղած բաները շատցընող մարդը,
շատ նեղութիւն կըքաշէ . և ա-
մեն կերպ անիրաւութեան ձեռք
կը զարնէ : Աւնեցածէն գոհ չըլ-
լար, ուրիշ մըն ալ ստանալ կ'ու-
ղէ . շատ մը անալիտան բաներով
ամենեւին հարուստ չըլլար : Ա-
ղէկուկ տուն մը իրեն քիչ կու-
գայ, մեծ պալատ մը շինելու
կ'աշխատի, պալատը շինելէն ետ-
քը, անօթներ, ձիեր, սպասաւոր-
ներ, կառքեր պէտք է, վասար-
կելու ճամբաներուն ամեն կերպն

ալ աղեկ կուգայ, թէե անիրաւ-
ւութեամբ ըլլայ: Առաջ փոխ
կ'առնէ, ետքը չփառ . մինչեւ
անգամ գողութեան կ'օկըսի. ա-
մենուն հետ թշնամի կ'ըլլայ, կը
կործանէ և կը կործանի:

Ո՞ւկ ազգի մեջ զեղիսութիւ-
նը թագաւորէ նէ, ամենը զեղ-
իսութեան հասնելու համար,
մեկղմէկ կը կործանեն: Իարքը
կ'աւրի, առաքինութիւն կը վեր-
նայ, զեղիսութենէ ադահութի,
ադահութենէ անիրաւութի կը
ծնանի. սուտ վկայներ կ'ելլան,
ամուսնական իրաւունքը կը վեր-
նայ. ամեն մարդ անողորմ և ան-
խըղձմտանք կ'ըլլան: Ըստ ան-
գամ գողութեան և մարդասպա-
նութեան պատճառն ալ այս է,
քիչ ըանի կարօտ ըլլող մարդը,
երջանիկ և առաքինի կ'ըլլայ:

Աշխատութիր, ժումկալու-
թիւնը, և բարեկարգութիւնը,
զեղխութե և փարթամուե նա-
խապաշարմունքը ատելով, մար-
դուս անանկ շահ մը կը գտնան՝ որ
ուրիշները ան շահը չեն գիտեր :

Անկարգ ծախք ընելով մարդս
օրէ օր մտատանջութիր կը շատ-
ցընէ, և յուսահատութեան մեջ
կ'իյնայ, յուսահատութիր հոգ-
ւոյ տկարութի կը բերէ. հոգւոյ
տկարութին ալ խարդախութե և
անիրաւութե պատճառ ըլլալով՝
երիտասարդը մեծ յանցանքներու-
տէր և ծերը խղճալի կ'ընէ :

Վեծ պարտքի տէր ըլլալու
ձամբան, ամենեւին մանր մունք
պարտքեր չընելն է. վաստակիու-
մեկ մասը պահէ. անոր մի դըստ-
չիր. փորձութեան մը կը հան-
գիալիս, ան ատենը պէտք կ'ըլլայ :

Եռալովանց հարուստ եղալ՝
իրիկուան ազքատ պառկիլ կայ .
ասանկ փորձութիւնները աղնք
ւութեամբ տանողը քիչ է : Չու-
նեւորութենի աւելի , հաղար-
տութիւնով խեղճըլողներ կան .
Չափաւորութիւնով ասպրելու
չափ , ձեռքը բան մնաց ըստինք ,
այն ալ առջի ունեցած փարթա-
մութիւնը չի կորսընցընելու հա-
մար կը հասցունի , բայցը կը մը-
նայ : Եշխարհքս տուն փորձու-
թեանց է , ամեն մարդ աշխարիս
փորձութիւնները միտքը բերելով
առաջիւնի բանը գիտնալու է :

Փորձութեան մը հանդիպե-
ցար , փարթամութիւնը ձըդէ .
չափաւոր եղիք . պարզ վարք մը
վարէ . բայց միշտ շնորհքը և վա-
յելութիւնը չի ձգելով մաքրու-
թիւնը սիրէ . մաքրուր և շնորհ-

քով ըլլալէն աւելի զարդ պետք
չէ քեզի : Աղէկ և քաղաքավար
ըլլալդ քեզի հերիք է : Քու ա-
ղէկութիւնդ և քաղաքավարու-
թիւնդ քեզ ամենուն պատուել
կուտայ : Առաջ հարստութեանդ
համար կը պատուէին , հիմայ
խելացի և տղնիւ ըլլալուդ հա-
մար կը պատուեն : Անանկ զուար-
ճութիւն մը կ'իմանաս , որ ա-
մենեւին չէիր կարծեր . բարեկա-
մութիւնը առ վիճակին մեջ կը
սորովիս . և Ճշմարիտ բարեկամ-
ներ կը գտնաս : Երջանկութիւ-
նը ուր ըլլալը այս ճամբով կը
հասկընաս :

Երջանկութիւր աղէկութիւ-
նով և արդարութիւնով կը գրտ-
նըվի . Երջանկութիւնը մտացա-
ծին բաներու մեջ մի փնտրուեր .
սրտի մաքրութենէ և արդարու-

թենէ աւելի երջանկութիւն չըւ-
լար : Ո՞ինչեւ բարի և արդար
ըլլաս նէ , երջանիկ չես կրնար
ըլլալ : Բարի և արդար ըլլալու
համար , Աստուած մեզ ստեղծեր
է . մեր երջանկութեան միջոցնե-
րուն մեկը արդարութիւնն է :
Արդարութե սահմանէն դուրս
ելլելնուս պէս , թշուառութիւ-
նը կը տիրէ : Այրջանկութիւնը
ուր փնտըրուենք նէ՝ չենք դտնար .
մինչեւ արդարութեան սահմանը
չի մտնանք նէ , չենք հանգչիր .
երջանիկ չենք ըլլար : Բայց ար-
դարութիւնը ինչ ըլլալն ալ դիտ-
նալ պէտք է : Ո՞եկ մարդ մը թէ
առ Աստուած , թէ առ ընկերն ,
և թէ առ իւր անձը ունեցած
պարտականութիւնը վճարելով
կ'ըլլայ արդարութիւնը . և այս
մոքով՝ արդարութիւնը առա-

քինութիւններուն ամէնն ալ իր
մէջը կը պարսւնակէ :

Երջանկութեան համար ան-
յաղթելի բնական փափաք մը
ունենալնիս , Բասկալը աղեկ
հասկըցեր է :

« Քանզի երբ որ մէկ մարդուն
հոգին խելք հասցընէ որ՝ այս
ինչ բանը զինքը իրեն գերադայն
սիրով սիրած բանին կրնայ հաս-
ցընել , հարկաւորապէս ինքն ալ
ուրախութեամբ և սիրով անոր
կը փաթարվի ո : (Խորհրդաժողովնեան
Բասկալայ . Անան Ա . Յօր . Գ . Բըշ
Ռահմանար 68) :

« Հիմա քիչ մըն ալ երջան-
կութեան կողմէն մտածեմք՝ որ
այնքան փափաքով իր ամէն գործ-
քերուն մէջ կը փնտրուէ : Քանզի
ամէն մարդ երջանիկ ըլլալ կ'ու-
զէ . և այս կանոնս բացառու-

թիւն չունի : Յժեղէտ այլ և այլ
իրարմէ տարբեր միջոցներ գործ
կ'ածեն , բայց ամէնուն ալ միտ-
քը հոս կը նայի . ասոր համար է
որ մէկը պատերազմի կ'երթայ .
մէկալը չերթար . երկուքին ալ
ուղածը և փափաքածը այս է . մի-
այն տեսնելու և մտածելու ե-
ղանակնին իրարմէ տարբեր է :
Կամքը ինչ ճամբայ բռնէ նէ՝ տ-
մէնուն ալ վերջին նպատակը հոս
կը նայի : Եմէն մարդոց ամէն
գործքերուն շարժառիթը այս է .
մինչեւ իրենք զիրենք մէռցընող-
ներուն և իրենք զիրենք կախող-
ներուն ալ դիտաւորութիւնը
ասկէց զատ բան չի կընար ըլլալ :
Այսկայն այսքան գարերէ ՚ի վեր՝
որ ամէն մարդ դէստ ՚ի ասոր ի-
րենց բոլոր ընթացքը ուղղեր են .
ասոր առանց հաւատքի հասնող

բնաւ մէկ մարդ մըն ալ չի կայ :
 Ամենն ալ տրտունջ կ'ընեն . իշխանաւ որ մարդիկ , իշխեցեալները , աղնաւականները , ռամիկ , ծեր , երիտասարդ , ուժով , տրկար , գիտուն , ագէտ , առողջ , հիւանդ , ամեն երկիր , ամեն ատեն , ամեն տարիքի և ամեն վիճակի մարդիկ իր գանգոսին ” :
 (Խորհ . Բառիալյ . Առան Բ . Յօր . Ա . Էլլ . 241) :

“ Եր բնական ազգ մունքը մեզի կ'իմացընեկ կոր , որ մեր երջանկութիւնը մեր մէջը փրնար ուելու եմք ։ (Խորհ . Բառիալյ . Առան Բ . Յօր . Ա . Էլլ . 244) :

“ Հասարակ մարդոց և սրբոց կեանքը իրարու հետ այս կողմէն մօտութիւն ունին , ամենն ալ երջանկութեան կը փափաքին . և տարբ երութիւննին միայն՝ եր-

ջանեկութեան առարկայ բռնած
բաներնուն վլայ է , որ անոր
հասնելը երջանկութիւն կը սե-
պեմք : Ի՞նչ բան որ զիրենք իրենց
երջանկութիւն սեպած բանին
հասնելու չի թողուր՝ արգելք
կ'ըլլայ նէ , ամենն ալ անոր թըշ-
նամի կ'ըսեն :

"Վշէկը կամ գէշը՝ Վատուծոյ
կամացը համեմատ դատելու է .
որ ոչ անիրաւ կրնայ ըլլալ և ոչ
կոյր : Ո՞ւր կամքը այս ընտրողու-
թեանս առաջնորդ բռնել չըլ-
լար . որ միշտ չարութեամք և
մոլորութիւ լեցուն է ո : (Խորհ .
Շատիալայ . Առան Բ . Յօր Ժէ . Իշլ .
452) :

Վռարինի չեղողը , երջանիկ չի
կրնար ըլլալ , կատարեալ առարի-
նութեան հիմն ալ սուրբ հա-
ւատքն է : Ճշմարիտ հաւատա-

ցեալ չեզողը կատարեալ առաքի-
նի չըլլար :

Կատարեալ փիլիսոփայ մը ան-
կարելի է որ անհաւատ ըլլայ :
Աէվդօն . Տէգարդ . Բասկալ .
Լայպնից . Պօսուէ . Ջէնէլօն .
Լուլէր . փիլիսոփայ էին . հաւա-
տացեալ և հասարակ մարդոցմէ-
աւելի ջերմեռանդ էին : Աէվ-
դօն Աթոռուծոյ անունը տուած
ժամանակը գլուխը կը բանար և
ոտք կ'ելլեր : Դուն անհաւատու-
թիւնը փիլիսոփայութի կը կար-
ծես : Խելացի և կատարեալ փի-
լիսոփայ մը՝ արարչութեան հա-
ւատալէն ետքը , կոյս աղջիկան
մը տղայ բերելուն դիւրաւ կը
հաւատայ : Աշինչէն այսչափ ան-
հուն էակներ ստեղծողին աղջի-
կան մը տղայ բերելտալը դժուար
չէ : Բու կարճ խելքդ Աթոռուա-

ծածնայ կուսութեանը չի հաս-
նիր . որովհետեւ արարջութեան
վրայ ամենեւին չես մտմտացեր .
Աստուծոյ արարջութեան մեջ ե-
ղած հրաշալի դաղտնիքներուն
տեղեակ չես :

Ուուսօն անհաւատներուն մե-
ծըն է : Ոտիկ ըրէ Պերնարտէն
սէն Իլյէրը , նայէ ինչ կ'ըսէ :
«Օր մը Ուուսօնն հետ Վարիէն
ըսուած լեռը գացինք . Երբ որ
լեռանը գլուխը ելանք , փորեր-
նիս անօթեցաւ . ճգնաւորներէն
ստակովնիս կերակուր ուղելու
միտք ըրինք : Կերակուրի ժամա-
նակէն քիչ մը առաջ վար ինջանք,
եկեղեցի գացեր էին , Ուուսօն
եկեղեցին երթանք ըսաւ . Ճրդ-
նաւորները Աստուծոյ փառաբա-
նութիւ կը մատուցանեին . մենք
ալ պատիկ պահարան մը մտանք

աղօթքնիս ըրինք . ճգնաւորները խուցերնին երթալ սկսեցին . Ոտուսօն փափաքով մը և Վէետարանին ըսածը հիմաց կ'իմանամ . զի ուր իցեն երկու կամ երեք ժողովեալ յանուն իմ , անդ եմ ես 'ի մէջ նոցա : Հոս խաղաղութեան և երջանկութեան աղդում մը կայ որ մարդուս հոգին մէջը կը մտնայ ո . ըստ : Ֆէնէլօն ողջ ըլլար նէ ուղափառ կ'ըլլայիր ըսի . աչուըներէն արցունք վաղելով և գողդըղալով , Ֆէնէլօն ողջ ըլլար նէ անոր փոքրաւոր ըլլալու կ'աշխատեի ըստ . (Ամբողջ Բնութեան , հաս . 3 . թղ . 507) :

Վայս սպատմութիւնը Ոտուսօն մեռնէլու մօտ ժամանակներն է . կատարեալ փիլիսոփայ մը քրիստոնեութիւնը չի կրնար ուրա-

նալ . Երւածոն իր գիրքերուն մէջ
ուրացեր է : Բայց մեռնելուն
մօտ իմացեր է :

Վնհաւասներուն ամէնն ալ
մահը մօտենալուն պէս մեղայի
եկեր են , և շատը քրիստոնեայ
մեռեր են . հոս երեւելիներէն
մէկ քանիին անունը տանք . Պու-
լանմէ . ' Եռուէնտ . Պուլէնվիլ .
Վարդի Տարժան . Վօնթէսքիւ .
Վօրէողուիս . Պիւֆփոն . Վօն-
թընէլ . Տամելավիլ . Յմոմաս .
Պուդէ . | անկլ . ' Երէսան . Վերսի-
է . Բալիսօդ . Առւլավի . | արշէլ .
Տիտոօն ալ հաղորդութիւնողեց ,
բայց քովը քահանայ թող չի ավին .

Ա օղէուին մահուան ատենն
ալ ասանկ սիմախ ըլլայ , որովհե-
տեւ ետքի օրէրը իւր հիւան-
դութեւ տագնապին մէջը , Խըղ-
ճալի ձայնով մը կը պուար Վա-

տուծոյ երեսէն ինկած էմ. մարդիկ ալ զիս չեն հոգար^{1:} Ուստի սօյին խելքը ցնորեցաւ, ինքը զինք մեռցուց:

Հաւատքը միշտ կրթութե և գիտութեան մայր եղած է. որ զաց իմաստութիւն, ծերոց ուժ կուտայ: Ուր է շնորհալին. ուր է նարեկացին. ուր է խորենացին, ուր են ազգերնիս ազգ ընող սուրբ թարգմանիչները. ասոնց ամենն ալ կատարեալ քրիստոնեութեամբ ազգերնիս լուսաւորեցին: Ուկ ազգին հոգին հաւատքն է, հաւատքը կորսընցընելուն պէս կը մեռնի:

Կըանելի սուրբ հայրապետներուն ժամանակը անոր քովին էր. այսպէս կը պատմէ:

¹ Դաւ. օնչէն Երեւելի բժիշկը մինչեւ մռնելու ժամանակը անոր քովին էր. այսպէս կը պատմէ:

լուսաւորեալ դարն է . Երբ որ
անօրէնութիւնը թերահաւատու-
թիւնը տիրեց , տգիսութիւնը
թագաւորեց , կարդա հայոց
պատմութիւնը երբ սուրբ և ա-
ռաքինի վարդապետներ և քրիս-
տոնեայ թագաւորներ ունեցանք ,
գիտութիւնը ծաղկեցաւ , և աղ-
դը պայծառութիւն ստացաւ .
թերահաւատութիւն և մոլու-
թիւն տիրելովն ալ կործանումը
ետեւնուս հասաւ :

Կատարեալ քրիստոնէութե-
նէն աստուածային շնորհ մը կը
բղխի , Երիտասարդներուն սիր-
ոք կը մաքրէ և իմաստութեամք
կը լեցունէ . Հաւատքը իմաս-
տութեան լազարին է :

Այս այն մարդուն որ քրիս-
տոնէութիւնը , իրեն փառասի-
րութեանը և արծաթօիրութելը

գործիք ըրեր է : Ա այ այն մար-
դուն ալ որ քրիստոնէութիւնը ,
աշխարհքիս կառավարութեանը
գործիք մը կը կարծէ . Երկնային
պարգեւ ըլլալուն չի հաւատար .
և Քրիստոնի աստուածութեա-
նը և Եստուածածնայ կուսու-
թեանը վրայ կ'երկրայի :

Խուսօն անհաւատ Փիլիսո-
փայներուն ամենեն խելացին էր .
նայէ ինչ կ'ըսէ : « Ա Ար խոստովա-
նիմ որ սուրբ գրոց վսեմութիւ-
նը ինձի կ'ապշեցրնէ . և աւե-
տարանին սրբութիւն սրտիս կ'աղ-
դէ : Փիլիսոփայներուն մեծ մեծ
փառաւոր գիրքերը , աւետարա-
նին քովը ոչինչ են : » Այսպէս ս
պարզ և միանգամայն վսեմդիքը
մը , մարդու գործը ի՞նչպէս կըր-
նայ ըլլալ : (Եմիլ , ճառ , դ . իշլ .
369) :

Ի-ասկալը ՚Քնի համար մարդարէններէն, նայէ ի՞նչ ուժով ապացոյցներ կը բերէ :

« ՚Քրիստոսի համար եղած ապացոյցներուն ամէնէն զօրաւորը՝ անոր վրայ եղած մարդարէութիւններն են : Կստուած ալ այս մարդարէութիւնները առաստուարում տուող գործը՝ մէկ հրաշք մըն է որ Եկեղեցւոյ սկիզբէն մինչեւ վերջը կը տեւէ : Կստուած հազար վեց հարիւր տարին չափ ատեն Ամարդարէններ հանեց . և չորս հարիւր տարիի չափ ժամանակ ալ բոլոր այս մարդարէութիւնները՝ և այս մարդարէութիւններուն աւանդապահ եղող աղքը ընդհանուր աշխարհի վրայ ամէն դին տարողունեց խրկեց : Վհա՛ Յիսուսի ՚Քը

րիստոսի ծննդեան ժամանակին համար եղած պատրաստութիւնները ասոնք են . որուն Աւետարանին բոլոր աշխարհքս հաւատալու էր : Չէ թէ միայն հարկ էր որ մարդարէութիւններ ըլլան՝ ասիկայ հաւատացընելու համար , այլ և այս մարդարէութիւնները բոլոր աշխարհի մէջ տարածվելու էին , որ ամէն մարդ հաւատայ :

Ա Վէկ մարդ մը միայն աշխարհք եկած ըլլար , և Քրիստոսի գալըստեան ժամանակըն ու եղանակը գուշակէր , և Յիսուս Քրիստոսի գալը անոր ըրած գուշակութիւններուն համեմատ ըլլար , ասիկայ անդամ անհուն զօրութիւն մը կ'ունենար : Ի՞այց մենք ասկէց շատ աւելի ունիմք : Երարքւ ետեւէ յաջորդող մար-

Դիկ կը տեսնեմք անընդհատ չորս
հազար տարի , որ ամենն ալ հաս-
տատապէս՝ և առանց փոփոխու-
թեան մէկը մէկալին ետեւէն
կուգայ , և ամենն ալ իրարու ը-
րած դուշակութիւնները կ'ընեն :
Ասոր հրատարակողը և քարողողը՝
ամբողջ ժողովուրդ և ազգ մըն է .
որ չորս հազար տարի անխախտ կը
կենայ՝ ասոր համար եղած դուշա-
կութինները համար . և այս ազգին
վրայ ինչ սպառնալիք ըլլայ , և ինչ
հալածում որ քաշեն , անհնար է
որ ասկէց ետ կենան անսնը . Ան-
սիային դալուստը քարողելու հա-
մար մէկ ազգ մըն են : Ասիկայ մէկ
ուրիշ կերպ մը զօրութիւնինի
“Քրիստոսի գալստեան ժամա-
նակը դուշակուած է հրէից աղ-
դին վիճակին կողմէն , հեթանո

սաց վիճակին կողմէն , տաճարին
կողմէն , և Ճիշդ տարիքներուն
համրանքովը :

“Արգարէները այլ և այլ նը-
շաններ ցուցուցեր են որ՝ Քրիս-
տոսի աշխարհք եկած ատենը պի-
տի ըլլան . Հարկ էր ասնք ամե-
նը մի և նոյն ատենի մէջ ըլլային :
Առոր Համար Հարկ էր չորրորդ
իշխանութիւնն ալ դար Դանիէ-
լի ցրցուցած եօթանասուն եօթ-
նեակները լրմբնցած ատենը , և
Յուդայի ազգէն դաւազներ վեր-
նար . և Անոխայ այն ատենը աշ-
խարհք դար : Եւ Յիսուս Քր-
իստոս ահա այն ատենը աշ-
խարհք եկաւ , և Անոխայն եւ
եմ ըստաւ :

“Դուշակուած էր որ՝ չորրորդ
իշխանութեան ատենը՝ երկրորդ
տաճարին կործանումէն և հրէից

Ճեռքէն իշխանութիւնը վերնաւ-
լէն առաջ, և 'Կանիէլի ըսած
եօթնեակներուն եօթանասնե-
րորդին մէջ՝ հեթանոսները կըր-
թըլին, ու դան հրէից պաշտած
Վատուածը պաշտեն պիտի : Եւ-
անիկայ սիրողները իրենց թշնա-
միներուն ճեռքէն պիտի ազատ-
վին, և անոր երկիւղովն ու սիրո-
վը պիտի լեցվին :

« Հիրաւի անանկ եղաւ, որ
չորրորդ իշխանութեան առենք՝
երկրորդ տաճարին կործանումէն
առաջ՝ և այլն, հրէից բաղմու-
թիւնը Վատուծոյ կ'երկրապագէ,
և հրէշտակային կեանք կը վարեն
աշխարհքիս մէջ. աղջիկները ի-
րենց կուսութիւնն ու կեանքը
Վատուծոյ կը նուիրեն. երիկ մար-
դիկ ամէն հեշտութիւններէ և
աշխարհային զուարձութիւննեւ-

ըէ ձեռք կը քաշե՞ն : Այս բանն
որ՝ Պղատոն չէր կրնար քանի մը
ընտրեալ և բարեկիրթ մարդոց
հաճեցընել, մէկ գաղտնի զօրու-
թիւն մը քիչ խօսքով նոյն բանը
հարիւր հազարներով տգէտ մար-
դոց կը հաճեցընէ :

“Ի՞նչ են ասոնք : Այս է որ
շատ ժամանակ առաջ գուշա-
կուած է . — Նեղից յոգւոյ իմմէ-
՚ի վերայ ամենայն մարմնոց — (Յ.
Վ. բ . 28) : Ամէն մարդ ան-
հաւատութեան և ցանկութեան
մէջ ընկղմած էին . ամէն երկիր
սիրով բըռընկեցաւ : Խշխանները
իրենց մեծութենէն կը հրաժար-
վին . հարուստները իրենց բարի-
քէն ետ քաշվեր են . աղջիկները
նահատակուելու յանձնառու
կըլլան . տղայք անապատ տեղե-
րը երթալ ասպիելու համար իրենց

Հօրը տունը կը ձըգեն . այս զօ՞րութիւնս ո՞ր տեղաց կուգայ :
Անկէց է որ՝ Վեսիայն եկած է :
Վհա ասոնք են անոր գալուննը-
շանները և գործքերը :

« Երկու հաղար տարիի չափ՝
Խարսյէլացւոց Աստուածը աշ-
խարհքիս աղդաց անթիւ բաղ-
մութենեն պահված էր . և ինչ
ատենվան համար գուշակուած
էր նէ՝ բոլոր հեթանոսները այն
ատենը բաղմութեամբ կուգան՝
ու այս մեկ հատիկ Աստուծոյ եր-
կըրագութիւն կ'ընեն . մեհւ
եանները կը կործանին , թագա-
ւորները անդամ գլուխնին կը ծը-
ռեն ու խաչին կը հնաղանդին :
Ի՞նչ են ասոնք . Աստուծոյ շո-
գին է որ բոլոր աշխարհքի վրայ
սփռուած է :

« Գուշակուած է որ Վեսիայն

պիտի գայ՝ և մէկ նոր ուխտ մը
պիտի հաստատէ . որ Եղիպտոս
ուն ելած առենին արրավածը
պիտի մնացընէ (Երեմ . իդ . 7) :
Երեն օրէնքը չէ լժէ գըրսէն՝ այլ
ամէն մէկուն սրտին մէջը պիտի
գըրնէ (Եսայի . ծա . 7) : Եր եր-
կիւղը՝ որ միայն գըրսէն երեւոյթ
մը ունէր , սրբաց մէջը պիտի
արմատացընէ (Երեմ . լս . 33 .
լը . 40) :

«Յիսուս Քրիստոսը հրեանեւ-
րը պիտի անարդէն» և իրենք ալ
Աստուծմը պիտի անարդըլլին .
որովհետեւ ընտիր այգին խաղո-
ղի տեղ ազոխ (իօնուի) տուաւ
(Եսայի . ե . 2 . 3 . 4 . և այլն) :
Բնարեալ ժողովուրդը անհաւա-
տարիմ և ազերախտ և անհաւատ
պիտի բլար . — Ճաղավաւրդ ան-
հաւան և հակառակող — (Եսայի ,

կե . 2) : Եստուած անոնք պիտի
կուրացընէր , որ օրհարաբկան
լուսոյն ատենն ալ կուրի պէս
խարիստիելով պիտի քալէին (թ .
Օրէնտ իլ . 28 . 29) :

“Եկեղեցին նոր սկըսած ատե-
նը պըզտիկ պիտի ըլլար , և ետ-
քը պիտի մեծնար (Եշէլ . խէ .
1 . եայլն) :

“Դռւշակուած է որ՝ կուտպաշ-
տութիւնը այն ատենը պիտի ից-
նայ , և այս Ո՞նսիայն կուռքերը
պիտի կործանէ , և մարդիկ ճըշ-
մարտին Եստուծոյ պաշտօնին պի-
տի բերէ (Եշէլ . լ . 13) :

“Կուռքերուն մեհեանները
պիտի փրլէին . և ամեն աղգերու-
մէջ , և աշխարհքիս ոմեն կողմը
անոր չէ թէ անասուն , այլ մա-
քուր պատարագ պիտի ընծայմի
(Ո՞ալաք . ա . 11) :

“ Ակատարեալ ճանապարհը մարդոց պիտի սորվեցընէ” (Եշայիք. բ. 3 : Այսիւ . դ. 2 . և այլն) :

“ Հրեից և հեթանոսաց թագաւոր պիտի ըլլայ (Առաջ. բ. 6 . 8 : հա . 8 . 11 . և այլն) :

“ Քրիստոսէ ոչ առաջ և ոչ ետքը բնաւ անանկ մարդ մը եկած չէ . որ գոնէ ասոնց մօտաւոր մէկ բան մը ընէ :

“ Այս ըլլալիքներս գուշակող այնքան մարդոցմէ ետքը՝ վերջապէս Յիսուս Քրիստոս աշխարհք եկաւ ու ըստաւ . ահա ես եկայ . ահա ժամանակն է : Եկաւ մարդոց ըստաւ՝ որ մարդս իր անձէն մեծ թշնամի չունի իրեն . զիրենք Աստուծմէ հեռացընողը՝ իրենց կիրքերն են . և ինքը անոնք այն կիրքերուն բըռնութենէն ազատելու . և իր շնորհքը անոնց

տալու Եկերէ՝ որ ամեն մարդոց
միութեամբը մէկ սուրբ Աշկե-
ղեցի մը հաստատէ . . և հրեանե-
րը և հեթանոսները մէկէն այս
Աշկեղեցոյս մէջ բերէ . հեթա-
նոսներուն պաշտած կուռքերը
և հրեայներուն սնապաշտու-
թիւնները վերցընեւ .

“ Անոնց ըստւ . ինչ որ Մարդա-
րէնները առաջկուց իմաց տուին
որ պիտի ըլլայ՝ իմ Առաքեալներս
այն բանները ոլիուի ընկեն . Հրեա-
նները պիտի մերժելին . Երտսա-
ղէմքիւ մը Ետքը պիտի կործա-
նի . հեթանոսները Աստուած
ձանչնալու կարգը պիտի մըսնեն :
Եւ դուք այդիին Ժառանգը մեռ-
ցընելնուգ Ետքը՝ Առաքեալնե-
րըս պիտի երթան անոնք այս կար-
գըս ոլիուի մըսցընեն : մըս
“ Ետքը Առաքեալները հրեայ-

ներուն ըսին . դուք պիտի եր-
թաք անէծքի տակ իյնաք . հե-
թանոաներուն ալ ըսին . դուք ալ
Աստուած պիտի Ճանչնաք :

“ Կոր ամեն մարդիկ կը հակա-
ռակին անանեկ հակառակութիւն
որ մարմնաւոր ցանկութեան յա-
տուկ է : Հրեից և հեթանոսաց
աց թագաւորու երկու կողմեն
ալ անարդըլաված և աչքէ ինկած
է , որ ամենքը ասիկայ մեռցընե-
լու համար խօսքը մէկ կ'ընեն .
Վշխարհըի մէջ որքան մեծ բան
կայ նէ՝ ամենն ալ մէկ կ'ըլլան ,
այս նորածին կրօնիս դէմ կը դը-
նեն . իմաստունները , խելքը
մարդիկ , թագաւորները , ոմանքը
դէմ կը դըրեն , սմանքը կը դատա-
պարտեն , և ոմանքը ալ կը մեռցը-
նեն : Եյս ամեն հակառակու-
թիւնները ըլլալով ալ ահա Յիւ

սուս Քրիստոս քիչ ատենի մէջ
ամէնուն վրայ ալ տիրելով հրէա-
կան պաշտօնը Երուսաղէմի մէջ
կ'աւրէ՝ որ այդ պաշտօնին կեղ-
բոնն էր . և այն տեղը իրեն առա-
ջին Եկեղեցին կը հաստատէ :
Կռոց պաշտօնն ալ Հռոմէն կը
վերցընէ՝ որ այս ալ կռապաշտու-
թեան կեդրոնն էր . և իր գլխա-
ւոր Եկեղեցին հոն կը դընէ :

“Պարզ և տկար մարդիկ , ինչ-
պէս էին Եռաքեալները և առա-
ջին քրիստոնեայները , ամէն աշ-
խարհային բռնութեանց դէմ
կը դընեն . Թագաւորները և
խելացիները և իմաստունները ի-
րենց տակը կ'առնեն . և անանկ
հաստատութիւն գտած կը ու ա-
պաշտութեան հիմը կը խախտեն :
Եւ այս ամէնըս միայն գուշակու-
բանին զօրութեամբը կ'ըլլայ :

“ Նըեայները Յիսուս Քրիս-
տոսը Անսիայ ընդունելու հա-
մար մեռցուցած ատեննին՝ անոր
Անսիայ ըլլալուն վերջին հաստա-
տութիւնը տուին : Եւ անիկայ
չի ճանչնալու վրայ յամառելով
նին՝ անոր անանկ վկայներ եղան,
որ մարդ բան չի կրնար ըսել ա-
սոնց տուած վկայութեանը : Եւ
անիկայ ոյն ատենը մեռցընելով
նին՝ և մինչեւ հիմա ուրանալով
նին՝ մարդարեռութիւններուն կա-
տարում տուին :

“ Այսպան մասնաւոր պարա-
գայները գուշակված տեսնելով
ով կրնայ Քրիստոսը չի ճանչնալ:
Քանզի ըստած է որ, “ Ո՞չ
կարապետ մը պիտի ունենայ
(Ո՞ւղաք. գ. 1) : Տղայ պիտի ծը-
նանի (Եսայի. թ. 6) : Եեթէ-
հէմ քաղաքը պիտի ծնանի (ՈՒ-

= 40 =

ժա . Ե . 2) : Յուղայի ցեղէն
սլիտի ծաղի (Օհ . Խթ . 8 . Ե
այլն) : Դաւթի ազգէն սլիտի գայ
(բ . Թագավառ . Ե . 12 . և այլն : Ե-
այլ . Ե . 13 . և այլն) :

Դլխաւորապէս Երուսաղէմի
մէջ սլիտի Երեւի (Ամանք . դ . 1 .
Անգեայ . բ . 10) :

“ Խելացիներն ու իմաստուն-
ները սլիտի կ'ուրացընեւ (Եսայի .
դ . 10) : Աղքատներուն և սլրդ-
տիկ մարդոց սլիտի քարողէ Աւե-
տարանը (Եսայի . կա . 1) : Կոյ-
րերուն աչքը սլիտի քանայ՝ և
հիւանդները սլիտի կենդանացը-
նեւ և առօղջացընեւ (Եսայի . լե .
5 . 6) : Անւթը մնալով սրբունը-
նին հատնողները լոյսը սլիտի հա-
նեւ (Եսայի . խբ . 16) :

Ալատարեալ ճանապարհ սլիտի
սորմեցընեւ (Եսայի . լ . 21) : Նե-

Թանոսներուն վարպետ և ուսուցիչ սիմառի ըլլայ (Եշայիք . ծե . 4)։
Աշխարհքիս մեղացը համար զոհ սիմառի ըլլայ (Եշայիք . ծգ . 5)։
Հիմք գրուելու պատուական վեմ սիմառի ըլլայ (Եշ . իը . 16)։
Վեմ գլորման և քար գայթակղութեան սիմառի ըլլայ (Եշայիք . ը . 14)։ Երուսաղեմ այս քարիս սիմառի զարնըլի (Եշայիք . ը . 15)։ Շնորը շինողները այս քարս ետ սիմառի ձգեն (Աշ . ձժէ . 22)։
Կոտուած այս քարս անկիւնի գլուխ սիմառի ընէ (անդ)։ Այս սինքն՝ հրեաներն ու հեթանոսները մի և նոյն Կոտուածը պաշտելու ասոր միջնօրդութեամբը սիմառի միաբանին։ Այս քարս սիմառի մեծնայ , ահագին լեռ մը սիմառի ըլլայ . և բոլոր երկիրների սիմառի լեցընէ (Կան . ը . 35)։

” Ասանկ ալ գուշակուածն է
արհամարհըլիլը (Ապշ. ՃԵ. 22).
չի ճանչցըլիլը (Եսայի. ծդ. 2.
3). մատնըլիլը (Ապշ. իս. 10).
ծախուիլը (Օաք. Ժա. 12.).
ապտակուիլը (Եսայի. ծ. 6).
ծաղրուիլը (Եսայի. ԼԴ. 16). հա-
զար կերպ տառապանք ու նե-
ղութիւնքաշելը (Ապշ. կը. 28).
Լեզի խմելը (Ապշ. կը. 22).
ձեռքվրներն ու ոտլրները ծակ-
վիլը (Ապշ. իս. 17). երեսը
թըքնելնին (Եսայի. ծ. 6). մեռ-
ցընելնին (Պան. Ծ. 26). հա-
գած լաթերը վիճակով բաժանել-
նին (Ապշ. իս. 19):

” Երրորդ օրը յարութիւ առ-
նելը (Ապշ. ԺԵ. 10. ՈՒԵ. զ.
3): Երկինքը ելլելը (Ապշ. իսզ.
6. կէ. 19). Նօր Աստուծոյ աջ
կողմը նստելու համար (Ապշ.

= 43 =

Ճ/Ճ . 4) :

” Յագաւորներուն անոր դէմ
զէնք առնելլը (Ապլ . բ . 2) :
Նօր Եստուծոյ աջ կողմը կենա-
լով իրեն թշնամիները յաղթելլը
(Ապլ . Ճ/Ճ . 5) : Եշխարհքիս
թագաւորներուն՝ ու ամէն ժո-
ղովրդոց անոր երկրապագութիւն
ընելիքնին , (Ապլ . հա . 11) :
Նրեայներուն ազգաւ մնալիքը
(Արէմ . լս . 36) . թափառական
(Ամոն . թ . 9) . և առանց թա-
գաւորի և առանց սեղանոյ և
առանց զոհի (ԱՀէ . ե . 4) . և
առանց մարգարեի (Ապլ . հգ .
9) մնալիքնին . փրկութեան ըս-
պասելնին և չի կրնալ գանելնին
(Ասոյի . Ճ/Ճ . 9 : Արէմ . ը . 15) :
” Ոիսայն Ուսիսիայն մէկ ըն-
տիր՝ սուրբ՝ և ուրիշներէն զատ-
ուած մեծ ժողովուրդ մը պիտի

Երեւան հաներ , անոր առ աջնոր
դեր և սնուցաներ , և հանգըս-
տեան . և սրբութեան տեղը պի-
տի խօմեր , և Աստուծոյ հա-
մար պիտի սրբեր . Աստուծոյ տա-
ճար պիտի ըներ , Աստուծոյ հետ
պիտի հաշտեցըներ , մեղաց ծա-
ռայութենե պիտի ազատեր՝ որ
յայտնապես մարդուս վրայ կը
տիրէ . այս ժողովրդեանս օրէնք-
ներ պիտի տար . և այս օրէնքնե-
րըս անոնց սրտին մէջը պիտի տր-
ոպաւորեր . անոնց համար ինքը
զինքը Աստուծոյ պիտի նուիրէր ,
անոնց համար պիտի պատարագ-
ուեր . ինքը պիտի ըլլար անբիծ
զոհ՝ և զոհ ընող քահանայ . ին-
քըզինք պիտի զոհեր , իր մարմի-
նը և արիւնը պիտի պատարա-
գեր , բայց Աստուծոյ նուիրածն
ալ հաց ու գինի պիտի ըլլար :

Յիսուս Քրիստոս ասոնք ամենն
ալ ըրաւ :

”Իուշակուած էր որ՝ աշխարհ
քիւ վրաւ մեկ Փրկիչ մը պիտի
գայ և սատանային դլուխը պիտի
ջախջախէ , և իր ժողովուրդը ա-
նոնց մեզքերէն պիտի ազատէ .
— Եա գրիկէ զիսրայէլ յամենայն
նեղութեց նորաւ — (Առջ . Ճիւժ .
8) : Եոր կտակ մը պիտի ըլլայ՝ որ
յաւիտեան պիտի մնայ . մեկ ու-
րիշ կերպ քահանայութիւն մը
պիտի ըլլայ Վելքիսեղեկի կար-
գովը . այս ալ յաւիտենական
պիտի մնայ : Քրիստոս պիտի ըլ-
լայ փառաւոր , կարող , զօրաւոր,
բայց անտենկ ալ աղքատ և խեղճ՝
որ պիտի ճանշնալը դժուար ըլ-
լայ . ինչ որ է նէ՝ պիտի չի գիտ-
նան . պիտի անարդեն և պիտի
սպաննեն . և իրեն ժողովուրդը

զինքը ուրանալեն ետքը իրեն ժուզուրդ պիտի չըլլայ . կռապաշտ ները անիկայ պիտի ընդունին և անոր պիտի դիմեն . Այսօն քաղաքը պիտի ձգէ , և կռապաշտութեան կեդրոն եղած տեղը պիտի թագաւորէ . սակայն հրեայներն ալ միշտ պիտի մնան : Եղագայի աղգէն սղիտի ծնանի . և աշխարհք եկած ատենը հրեայները թագաւոր պիտի չունենան :

Ա ԱՇ կ անգամ մոտածէ որ՝ աշխարհքի սկիզբէն սկսելով՝ անընդհատ կերպով միշտ ակնկալութիւն կայ որ Անսիայն պիտի դայ , և անոր երկրապագութիւն կ'ըլլուի : Առաջին մարդը մեղքինկածին պէս՝ այս խոսառումու անոր եղաւ . և անկեց ետքը ատեն ատեն մարդիկ ելան , որ ը-

սին թէ՝ Աստուած իրենց յայտ-
ներ էր որ իր ժողովուրդը ազա-
տելու համար Փրկիչ մը պիտի
ծնանի : Անոնցմէ ետքը Արբա-
համ եկաւ և ըստ թէ , ինձի
յայտնուեցաւ որ ինձի ծնանե-
լու տղուս ցեղէն պիտի գայ Ո՞ւ-
սիայն : Հակոբ տասն և երկու
դաւակ ունէր . յայտնեց որ՝ Յու-
դա անուն տղին ցեղէն աշխարհը
պիտի գայ : Ետքը Ո՞վլուէս և մե-
կալ Ո՞արգարէները եկան , անոր
աշխարհը գալուն Ժամանակը և
կերպը իմացուցին : Ըսին որ՝ ի-
րենց օրէնքը մինչեւ Ո՞ւսիային
տալու օրէնքին ատենը պիտի քը-
շէր . անոր պատրաստութիւն մըն-
էր : Եւ ասանկով անոնց օրէնքը՝
և Ո՞ւսիայինը՝ որուն իրենց օ-
րէնքը միայն պարզ խոստմունք
մըն էր , աշխարհի վրայ պիտի

յաւիտեան մնայ . և իրօք ալ
միշտ մնացած է . և վերջապես
Քրիստոսի գալստեանը համար
ինչ պարագայներ իմացուցեր է .
ին նէ՝ Քրիստոսի գալստեանն ալ
նոյն պարագայները տեսնուե-
ցան : Ասիկայ զարմանալի բան է ,
ո Պիտի բակես . թէ որ այս բա-
ներս յայտնի կերպով հրեանե-
րուն գուշակեցին նէ՝ հրեայնե-
րը ինչու չեն հաւատար : Կամ
ասանկ յայտնի բանի մը դիմադր-
ութիւնը ընելնուն համար ինչու
բնաջինջ չեղան : Պատասխան
կուտամ որ՝ ասոնց երկուքն ալ
ասանկ ըլլալիքը առաջկուց գու-
շակուած է . թէ ասանկ յայտնի
բանի մը չի հաւատալիքնին , և
թէ բնաջինջ չըլլալիքնին : Եւ
Ասիային համար ասկէց ալ ա-
ւելի փառաւոր բան չի կընար ըւ-

լաւ . քանզի միայն մարդարէ
գտնուիլը հերիք չէր՝ պէտք ալ
էր որ՝ անոնց մարդարէութիւն-
ները կասկած չի վերցընելու կեր-
պով մնան : Ուրեմն՝ այս ալ ՚Քր-
դիստոսի գալստեանը և կրօնից
Ճշմարտութեր ապացոյց մընէ :

„ Մարդարէները ՚Քրդիստոսի
վրայ ըրած մարդարէութիւննե-
րէն զատ՝ ուրիշ մասնաւոր մար-
դարէութիւններ ալ ըրին . որ
պէս զի՞ ՚Եսօխային համար ըրած
մարդարէութիւննին առանց ա-
պացոյցի չի մնայ . և մասնաւոր
բաներու վրայ ըրած մարդարէն
ութիւննին ալ անպատշել չելլէ :

„ Արեայները կըսէին . — Չիք
մեր թագաւոր բաց ՚ի կայսերէ —
(ՀՅԱՀ . ԺԹ . 15) . անանկ է նէ՝
Քիսուս ՚Քրդիստոսը ՚Եսօխայ էր .
որովհետեւ ունեցած թագաւոր

= 50 =

Նին օտարազգի էր . և իրենք ալ
ուրիշ թագաւոր չէին ուզեր :

“Դանիկէլի ըսած եօթանասուն
եօթներորդներուն որկէց ըսկը-
սուիլը՝ մարդարէութեան խօսքե-
րուն մթութեանը համար անո-
րոշ է . ժամանակագիրներուն
կարծեաց տարբերութեանը հա-
մար ալ վերջացած ձիշտ տարին
անորոշ է : Իսպաց այս կարծիքնե-
րուն տարբերութիւն ամենը քսան
տարիի վրայ է :

“Եիսուսի Քրիստոսի աղքա-
տութիւնը ցըցընող Արդարէ-
ներն են որ՝ անանկ ըսած առեն-
նին անիկայ համօրէն աղքաց ալ
տէր կը ցըցընեն (Եսայիշ ծգ . 2 .
և այլն : Օտար . թ . 9 . 10) :

“Քրիստոսի դալու ժամանակը
մարդարէութիւն ցըցընող Արդա-
րէները՝ Քրիստոսը իրրեւ տէր՝

և չարչարանք քաշող կը ցըցընեն .
ամսկերուն վրայ՝ և իբրեւ դա-
տաւոր չեն ցըցըներ : Եւ փա-
ռաւորութիր և աշխարհքի աղ-
գերուն վրայ դատաւորական իշ-
խանութիւն բանեցընելը դու-
շակողները՝ դալուն ժամանակը
չեն յայտներ :

ո Ո՞սիայի համար մեծութե-
և փառաւորութեան խօսք ըլլայ
նէ՝ յայտնի է որ անոր աշխարհք
դատելու համար դալուն վրայ է
խօսքը . իբրեւլու համար դալուն
վրայ չէ ո (Եսայի , կլ . 15 . 16) :
Կարծեմ այտչափ զօրաւոր ա-
պացոցներով հաստատեալ հա-
ւառքի մը ճշմարիտ ըլլալուն վր-
այ տարակոյս չի մնաց :

Ճշմարիտ քրիստոնեայ ըլլանք
զաւկըներնուս դիտութիւն սոր-
վացնելէն առաջ ճշմարիտ քրիս-

տանեռութիւնը սորմիցը նենիք :

Վրիստոնեռութիւնը գիտութեան ազրիւրն է՝ որովհետեւ խոնարհութեան և համեստութեան շնորհը մը տալով, մարդուս վրայ զգաստութիւնն մը կը բերէ . զգաստութիւնն ալ խորհրդածութեան տեղի տալով միաբը կը լուսաւորէ և գիտութեան ընդունակութիւնն կուտայ :

Ո՞արդս բնականաբար տկար և տղէտէ . տկար է՝ որովհետեւ ամեն բանի կարող չէ . տղէտէ՝ որովհետեւ ապագան չի կրնար գուշակել . Աստուծոյ ապաւինելով և ազօթելով ուժ և լուսաւորութիւն կ'ըստանայ :

Ո՞արդուս սրտին մէջը ազօթելու բնաւորութիւնն մը կայ, ձախորդութեան հանդիպողը և

Դժուար բանի ձեռք դարնողը
միշտ Աստուծոյ կ'ասլաւինի , ա-
զօթելով մխիթարութիւն և յա-
ջողութիւն կը գտնայ : Ամենէն
հին աղջերուն սրատմութիւննե-
րը թղթատէ՝ և ասօրվան օրս բո-
լոր աշխարհք սպառլուէ , մեր չի-
գիտցած և չի տեսած ազգերը
գտիր , միշտ կը աւոնաս որ ամեն
ազգ հաւատքի մը կը ծառայեն :
Աստուծ մարդս ստեղծեց և
աշխարհքիս վրայ ձգեց՝ ուրիշ
բանի չխառնուիր բառդ հաւատք
մը չես գտնար : Այսպիսի կար-
ծիքները ՚ի սկզբանէ հետէ ամեն
մարդոց սորվածին վրայ բան ա-
ւելցընելու ելող մասնաւորայ
մոքին մոլաք գտումն է . ամեն
հաւատք Աստուծ իր կարողու-
թեամբը աշխարհ ստեղծեց , նոյն
կարողութեամբն ալ ինեւմելը կը

սորմեցընէ . ամեն ազգ աշխարհիս բարիքները յաւիտենականին խնամքէն ճանչնալով՝ կարօտ եղածնին աղօթելով անկեց կը խնդրեն , և խնդրուածնին կատարելուն համար փառաբանութիւն կը մատուցանեն : Ուուսօանհաւատ մատենագիրը՝ աղօթքով Աստուծմէ բան ուղելը պարագ բանէ՝ միայն Աստուծոյ պարգեւածներուն գոհաննալու է՝ և արարածոց գեղեցիկ կարգը տեսնելով՝ Աստուծածային իմաստութիւնը փառաբանելու է „ , կ'ըսէ : Եայց ասոր ըսածին մէջ խելքի դէմ նախապաշտում մը կայ մարդս միշտ Աստուծոյ ողորմութեանը կարօտ է՝ և Աստուծածալիր պարգեւածները մարդէս չի խնայելն ետքը , ինչո՞ւ իր պիտոյքը աղօթելով չի խնդրէ .

տուած պարդեւացը գոհանալ
պէտք ըլլայ նէ՝ չունեցածնիս ալ
հարկ է խնդրելը։ Տուողը ան չէ,
աշխարհիս կարդը անանկ բերաւ
ըսես նէ՝ դիսուածքի համար դո-
հութիւն տալ ինչ պէտք է։

Ո՞արդոց մէջ անանկներ կը
գտնուին՝ որ հոգինին զգայա-
րանքներնուն մէջը բանտարկեալ
ըլլալով, աղօթելու բնական բեր-
մունք մը ունենալիս չեն զգար-
բայց փորձութեան մը հանդի-
պելնուն պէս՝ հոգինին զգայա-
րանքներուն բռնութենէն կ'ա-
զատի, և ուրիշներուն հետ ա-
զօթելու կ'սկըսին։

Աղէկ մարդ մը, գլխուն վրայ
հրաշալի կերակով դարձող աստղե-
րը՝ և երկրի վրայ անուշահոտ գե-
ղեցիկ ծաղիկները՝ քաղցրածաշակ
պտուղները՝ և մանր կենդանին

ներուն բնական աղդմամբ վար-
վելին տեսնալով, Արարիչին կա-
րողութիւնը և զօրութիւնը կը
հասկընայ՝ և Աստուծոյ Երկիւղը
սրախն մեջէն չի հանելով, միշտ
փառաբանութի կը մատուցանե.

Աղօթքին հրաշագործութիւ-
նը և օգուտը ով կընայ արժա-
նապէս պատմել մարդուս սրախն
խորունկ տեղը հասնիս նէ՝ յու-
սոյ և փափաքի դանձ մը կը-
դանես :

Չախորդութեան և փորձու-
թեան համապներուն որը՝ ողոր-
մած Աստուծոյ պաղատելով ջեր-
մեռանդաբար աղօթելէն եաքը
միսիթարութիւն չէ դատեր, առ
Աստուծած աղօթելով՝ հոգւոյ եր-
ջանկաւթիւն և սրափ խաղաղու-
թիւն կը ծագի, իր վիճակը Ա-
րարիչին յայտնեց, և իր պիտոյ,

քը անկեց խնդրեց, ուղածը ի-
րեն աղէկ ըլլայ նէ՝ Աստուած իր-
մէն չի խնայելը աղէկ գիտէ, չի
տայ նէ՝ կարելի էր ուղածէս ինձի
գէշութիւն գար՝ Ա՞չ զիս սիրե-
լուն համար խնդիրքս չկատարեց
ըսելով, գոհ կ'ըլլայ. բոլոր փիլի-
սովայութիւնը հաւատքն է՝ և հա-
ւատքը փիլիսովայութենէն աւե-
լի է, փիլիսովայութիւնը ճշշ-
մարտութիւնը մինտքուելու վրայ
է՝ հաւատքը ճշմարտութե աղ-
բիւրը կը ցըցընէ, ճշմարտութիւնը
քու մոքիդ մէջը չէ, Աստուծոյ
ձեռքն է՝ Աստուած ճշմարտու-
թիւնը յայտնած ըլլար նէ՝ մար-
դըս բանմը գիտնալիք չունէր.
աղօթքն ալ այն ճշմարտութիւնը
ձեռք ձգելուն եղանակն է, ար-
տաքին փիլիսովայութիւնը ասոր
չի կընար հասնիլ:

Արտաքին փիլիսոփաները ճշշ-
մարտութիւնը ուր գտնելիքնին
չեն գիտեր . խել մը ատեն ուր
ըլլալը գտնելու կ'աշխատին , դը-
տանք կը կարծեն՝ բայց ձեռք ձը-
գելու եղանակը , չեն գիտեր ,
ասոր համար արտաքին փիլիսոփա-
ներուն մէջը այնքան կարծեաց
տարբերութիւն կայ . փիլիսոփա-
յութիւնը յայտնեալ ճշմարտու-
թեանց վրայ հիմնողները իրարմէ-
տարբեր կարծիքներ հնարելէն ա-
զատ են :

Աղօթքը հաւատքին գործնա-
կան մասն է , մէկ մարդուն հա-
ւատքը իրեն ըրած աղօթքէն կը
հասկըցվի . հաւատքը փիլիսոփա-
յութիւն ըլլալը ընդունողը , ա-
ղօթքն ալ գործնական փիլիսոփա-
յութիւն ըլլալը կ'ընդունի . բայց
խօսքերնիս հաւատքը՝ ու բարե-

պաշտական գործքերը իրենց խար-
դախութեանը՝ և անձնական օդ-
տին իրբեւ միջոց գործածողնե-
րուն համար չե:

Այս բնաւորութեանը մեջ
օրէնք մը կայ՝ այն օրէնքը մեզի
բնականաբար գետ՝ ի գերագոյն
էակին կ'ուղղէ՝ և մեր ամէն
բարեացը սկզբնապատճառ ։ Կատ-
ուած մը կը ճանցընէ . մեր մեջը
ծածուկ ճայն մը կայ՝ միշտ մեզի
կը պօռայ՝ ստեղծողիդ փառա-
բանութիւն տուր, զօրութիւնը
տեսնելով զուարձացիր, կարո-
ղութիւնը գիտնալով պիտոյքդ
անկեց ուղէ, և անոր երկրպա-
գութիւնը ըրէ . Կատուծոյ գոյու-
թիւնը մեր սրտին մեջը տպաւո-
րեալէ ։ Կատուած աշխարհս չի
խնամեր ըսես նէ՝ գոյութեանը
ապացոյց Բնէ կը մնայ, կը խնամե-

ըսեսնէ՝ ՚ի հարկէ աղօթից հարկաւորութիւնը սկսով ճանչնաս :

Պլուտարքոս աշխարհիս սկիզբէն մինչեւ այսօր՝ անհաւատ աղդ մը տեսնուած չէ կըսէ՝ ամեն աղդի մեջ մինչեւ անդամ բարբարոսներուն մեջ այս աղդումը կայ՝ Պլուտարքոսի ըսածին յայտնի ապացոյց մըն ալ այսէ՝ որ վայրենի աղդաց մեջը անդամ աղօթել կայ, մանաւանդ անանկներուն մեջ հաւատքն ու աղօթքը մեկ ըսելէ. մեկու մը համար աղօթքը ըրած չունի, անհաւատ է ըսելը՝ ճշմարիտ տրամաբանական հետեւութիւն է :

Վարդս ընկերական կենդանին է՝ և անհաւատ փիլիսոփայներուն ամենն ալ ընկերութեան հիմը հաւատքը ըլլալը հաստատեր են՝ և հաւատք չըլլայ նէ

ընկերութիւն չըլլար ըսեր են .
ուրեմն ընկերութեան մը մէջ ա-
զօթք չըլլայ նէ՝ հաւատքին տկա-
րանալուն և ընկերութեանը քակ-
ուելուն նշանն է :

Մարդս ընկերական է՝ մինակ
չի կրնար ապրիլ ընկերական ըլ-
լալը մարդուս բնական է . ընկե-
րութիլ բնական ըլլալով ՚ի հար-
կէ անոր հիմն ալ բնական կ'ըլլայ .
այսինքն՝ բնութիւնը անոր կարօտ
է՝ Կոտուած անիկայ մարդոյս չի
տար նէ՝ մարդս ընկերական չէր
ըլլար , իր բնական յատկութիւնը
կ'աւրէր . հաւատքը շինուած բան
չէ՝ բնական յատկութիւննիս պա-
հելու համար Կոտուծմէ շնորհ-
ված է . այս Ճշմարտութիւնը ան-
հաւատ փիլիսոփայները անգամ
չեն կրնար ուրանալ :

Բայց այսչափ հաւատքներուն

մէջէն՝ մէկը միայն ճշմարիտ է .
որովհետեւ ճշմարտութիւնը մէկ
է , ճշմարտութեան աղքիւրն ալ
մի է , որ է Աստուած :

Ճշմարտութիւնը վկայութիւ-
նով կը ճանչցուի , իրարու հա-
կառակ վկայութիւններ կրնան
ըլլալ . որ վկայութիւնը ստու-
գապէս Աստուածմէ ըլլալը ճանչ-
նալու համար , դատում պէտք
է . բայց դատման պաշտօնն ալ
այսրան է , խօսքին ճշմարիտ կամ
սուտ ըլլալը դատելու ելածին
պէս կը մօլորի . Աստուածմէ եղած
վկայութիւնները դատել չըլլար ,
դատումը երկու հակառակ բա-
նին ստոյգը կը զատէ՝ ճշմարտու-
թիւնը դանելու կարողութիւն
չունի : Ճշմարիտ հաւատոք վիճ-
առաելու համար խելքերնիս ա-
ռաջնորդ բոնել չըլլար . մեր

դատման տկարութիւնը , մեղ
կը մոլորէ՝ հաւատոյ ճշմարտու-
թիւնը վկայութիւնով կը գըտ-
նուի , որ հաւատքին վկայու-
թիւնները ուժով է նէ , ճշմա-
րիտ հաւատքը այն է . վկայու-
թի մը Եսոսուծմէ բլալը հաս-
տառուի նէ՝ անկեց զօրաւոր վր-
կայութիւն չըլլար . վկայութիւ-
նը ինքնին զօրաւոր է , բայց
հարկ է որ՝ մէջը սուտ կամ շին-
ծու կամ յետամաւոր բան չըլլայ .
մէկ դիէն վկայութիւն , մէկ դի-
էն այն վկայութիւններուն հա-
ւատալ աշխարհիս կազն է , ա-
ռանց ասոր մարդ չի կրնար ապ-
րիւ . մարդս հացը որնու-
ցիչ ըլլալուն համար եղած վր-
կայութեանը կը հաւատոյ՝ ետ-
քը կ'ուտէ . հիւանդ մը բժշկին
բժշկելու կարողութիւն ունե-

նալուն կը հաւատայ՝ անանկ ինքը պինքը կը ցըցընէ , այս ինչ գեղը խմելով բժշկութիւն գտնալու կը հաւատայ՝ այն յուսովը կը խմէ : Եմէն մարդ՝ թոյնը մեռցը նողնիւթ մը ըլլալուն կը հաւատան , և բերաննին չեն տանիր . այսպիսի բաներուն չի հաւատալ ըլլար՝ փորձելու և գատելու ելլողը կը մեռնի :

Վարդս լսելով և խօսողին վրկայութիւնը բռնելով և հաւատալով խելահաս կ'ըլլայ . վկայութիւնն ալ ընկերութիւնով և ընկերութեան մէջ կ'ըլլայ :

Վարդս ընկերութենէ դուրս չի կրնար ասլրիլ . նախաստեղծին ժամանակը , ընկերուի չի կար , անոր համար Ե՞՞ծ առաջին մարդուն՝ ընկերուի ընելու զիջաւ , որ ընկերութե՛ հարկաւոր եղած ճըշ-

մարտութիւնները անոր աւանեցէ, և անոր հետ խօսելով բարին ու չարը ճանչցընէ . եաբը երբոր մասնաւոր դատումներէ ծագած մոլորութիւնները շատցան և առաջին աստուածաւանդ Ճշմարտութիւնները մթացան, և միայն մէկ մասնաւոր աղքի մը մէջ ամփոփեալ մնացին, նորէն հարկ եղաւ Աստուծոյ՝ մարդոյ հետ ընկերութիւն ընել անոր համար մարդ եղաւ, բայց այս անդամիս աւանդած Ճշմարտութիւնը անխախտ պահելու համար՝ եկեղեցի մը սահմանեց, այս եկեղեցին չի սահմաներ նէ, առեն անցնելէն ետքը մէկ մըն ալ մարդ ըլլալ և մարդոց հետ ընկերանալ պէտք կ'ըլլար :

Ճշմարտութիւնը աստուծմէ մեզի կուգայ, Աստուծոյ Ճշմար-

= 66 =

տութիւնն ալ մեծամեծ վկայու-
թիւններով հաստատեալ է . այս
մեծամեծ և զօրաւոր վկայութիւ-
ներն ալ կաթուղիկէ և առաքե-
լական սուրբ Եկեղեցւոյ մեջ կը
դանաս , կաթուղիկէ և առաքե-
լական սուրբ Եկեղեցիկն զատ-
ուելուդ սկսու կը մոլորիս :

Տ. Ա. Տ.







120



Գիւ 50 ֆարազ

